

Նախադրյալ

Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնը /ՔՀԶԿ/ ո՛չ կառավարական, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1996թ. և գրանցվել է 1998թ.։ **ՔՀԶԿ**-ն “Ղևոնդ Ալիշան” լուսավորչական – մշակութային ընկերության իրավաժառանգորդն է։ Կազմակերպության անդամները առաջատար գիտնականներ, մշակույթի գործիչներ և բուհերի դասախոսներ են։ **ՔՀԶԿ**-ի կազմում գործում են. *Գիտնական կանանց խորհուրդ, Երիտասարդների խորհուրդ, Տարեց կանանց լիգա*

Մեր առաքելությունը. աջակցել ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության գաղափարներին, կանանց և ազգային փոքրամասնությունների իրավունքների, բաղմակարծության, բազմազանության (մշակութային, լեզվական, կրոնական և քաղաքական) գաղափարների տարածմանը

Մեր գոհ մասնակիցները

Ես կցանկանայի արտահայտել իմ երախտագիտությունը մեր երեխաներին 3 շաբաթ շարունակ ուսուցանելու համար։ Ցանկանում եմ Ձեր կազմակերպությանը նոր հաջողություններ, *Աշխեն Մուրադյան, գյուղ Խաչիկ*

Կցանկանայի իմ երախտագիտությունը հայտնել **ՔՀԶԿ**-ին մեր գյուղում ճամբար կազմակերպելու համար։ Երեխաներին շատ դուր եկավ։ Նրանք ավելի ազատ և ուրախ դարձան, քան առաջ էին։ “Երեխաները մեր ապագան են”՝ կուզենայինք, որ այդպիսի ճամբարներ կրկին ու կրկին կազմակերպվեին մեր գյուղում, *Անժելիկա Հարությունյան, գյուղ Քասախ*

Իմ մեծ երախտագիտությունը և լավագույն ցանկությունները **ՔՀԶԿ**-ին, հատկապես ամառային ճամբարը կազմակերպողներին։ Չեմ կարող արտահայտել զգացմունքներս, երբ տեսա երեխաների աչքերին այդքան ուրախություն ու երջանկություն։ Թող Աստված օրհնի Ձեզ և հաջողություն բերի, *Վերոնիկա Մաֆարյան, գյուղ Սայաթ- Նովա*

Ծրագրեր

- «Հայոց լեզու և մշակույթ» - ամենամյա ամառային դասընթացներ
- «Ծանոթացեք Հայաստանին» - պատմական վայրերի այցելություն
- «Երեխաները մեր ապագան են» -ամառային ճամբար երեխաների համար
- «Ոչ միայն հացիվ» - հետազոտական և հրատարակչական ծրագիր
- «Ճանաչիր Հայրենիքը» - հատուկ հոգեբանական-մշակութային ծրագիր փախստականների համար



ԻՆՉ Է ԱՄՍԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԸ

ՔՀԶԿ-ի հիմնական ծրագրերից մեկը՝ “Երեխաները մեր ապագան են” ծրագիրն է,որի շրջանակներում, սկսած 1994թ.-ից մենք կազմակերպում ենք ամառային ճամբարներ։

Ճամբարի նպատակները հետևյալն են.

- Օգնել արտասահմանցի երեխաներին ծանոթանալ Հայաստանին
- Օգնել նրանց սովորել հայոց լեզուն, մշակույթը և հայոց պատմությունը հայախոս շրջապատում
- Մեծ փորձ և բարձր որակավորում ունեցող ուսուցիչները կսովորեցնեն նրանց հայոց լեզու, մշակույթ և հայոց պատմություն
- Ծրագիրն ընդգրկում է նաև հայկական երգի և պարի դասեր

- Փորձված դաստիարակները կապրեն և կաշխատեն երեխաների հետ
- Բազմազան մշակութային ծրագիրն ընդգրկում է հանդիպում ճանաչված մարդկանց հետ, համերգներ, էքսկուրսիաներ դեպի Սուրբ Էջմիածին, Գառնի, Գեղարդ, Սևանա լիճ և այլն։

Ովքեր կարող են մասնակցել

- 9-14 տարեկան բոլոր երեխաները
- Աշխարհի բոլոր երկրների և ազգությունների երեխաներ

Ճամբարի տևողությունը 12 օր է։

Փախստական երեխաների համար ճամբարն անվճար է

Ճամբարը գտնվում է Հայաստանի գեղատեսիլ վայրերից մեկում՝ Ծաղկաձորում՝ Ճամբարի կազմակերպման պայմանները՝

- Երկու սենյականոց համար հանգստյան տանը (հեռուստացույց, տաք և սառը ջուր)
- Նախաճաշ, ճաշ, ընթրիք
- Հայց լեզվի և մշակույթի դասեր
- Էքսկուրսիաներ
- Մշակութային ծրագիր
- Հայկական երգի և պարի դասեր
- Սպորտային ծրագիր



ԱՅՏ

ԱՆՈՒՆ -----

ԱԶԳԱՆՈՒՆ-----

ՀԱՍՑԵ-----

ՀԵՌԱԽՈՍ-----

ՖԱՔՍ, ԷԼ.-ՓՈՍՏ-----

ԾՆՆՆՑԱՆ ԹԻՎ-----

ԵՄ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՔՀԶԿ-Ի
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻՆ, ՈՐԸ
ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ----- 20 թ.

ՍՈՒՅՆ ՀԱՅՏՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԻՄ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՄԲԱՐԻՆ

ԱՄՍԱԹԻՎ -----

ԾՆՈՂԻ ԱՆՈՒՆԸ -----

ԾՆՈՂԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ -----



*ՔՀԶԿ-ն պատրաստ է կապեր հաստատել և
համագործակցել թե՛ տեղական, թե՛ միջազգային
կազմակերպությունների հետ*

Փոստային հասցեն. Նալբանդյան 49, # 7
0025 Երևան, Հայաստան
Գրասենյակի հասցեն. Աղայան 15, #17
0009 Երևան, Հայաստան
Հեռ. (374 10) 560 544
Ֆաքս. (37 4 10) 585 677
Էլ.-փոստ. info@cdcs.am
Website: <http://www.cdcs.am>

ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ

ՓԱԽՍՏԱԿԱՆ և ՏԵՂԱՅԻ
ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

